ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մեր ժողովրդի պատմության, ինչպես նաև Հայաստանյայց Եկեղեցու տարեգրության մեջ կան նվիրական ու «աղոթք դարձած» բազմաթիվ տարեթվեր։ Մեր երանաշնորհ հայրապետների բավականին ստվար մի խումբ, որն արժանացել է հայ ժողովրդի սիրույն ու հարգանքին, շինարար ու շնորհակալ գործ է կատարել մեր Եկեղեցու, Հայրենի Հողի և մեր ժողովրդի անցյալի փոթորկահույզ կյանքի պայծառության, բարգավաճման և խաղաղության համար։ Այդ հայրապետների պայծառ անունները սրբացած են մեր պատմության մեջ և հայ ժողովրդի երախտագետ սրտում։

Այսօր, մեր երախտաշատ հայրապետների լուսափաղանգի մեջ, իր արժանի և արդար տեղն է գրավում մեր սիրելի և աստվածարյալ Հայրապետը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի գահակալության երկրորդ տարեդարձն է տոնում հայ ժողովուրդը ամեն տեղ, այդ համոզմունքով և սրտառուչ երախտագիտությամբ։

Անցել են ազգային-եկեղեցական գործունեության երկու խաղաղ և արդյունավետ տարիներ և Վեհափառ Հայրապետը նվաճել է բոլորի հարգանքը, երախտիքն ու սերը։ Վեհափառ Հայրապետի գահակալության տոնը հայ ժողովրդի տոնն է, Ս. Էջմիածնի տոնն է։

Մեր ժողովրդի ազգային-եկեղեցական այս մեծ տոնի առթիվ, մեզ հետ միասին ուրախանալու համար, Մայր Աթոռ էին ժամանել նաև թանկագին հյուրեր, ինչպես Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը և Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի ներկայացուցիչ, Աստրախանի և Ստալինգրադի եպիսկոպոս Նորին Սրբազնություն Սերգեյը։

Շաբաթ օր է, «տօն Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց»։

Վաղ առավոտյան պաշտվում է ժամերգություն և սուրբ պատարագ, որի ընթացքում կատարվում է չորս սարկավագների և կիսասարկավագների ձեռնադրությունը։ Այսօր տոն է Թարգմանչաց մեծ վարդապետների, տոնն է Հոգևոր Ճեմարանի ուսանողության և նախատոնակը Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի։ Մայր Աթոռում հանդիսավոր իրադրություն է։ Ուրախ են բոլորը։ Այդ ուրախությունը կրկնապատկվում է Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին

Սրբություն Մելքիսեդեկ Գ-ի շնորհաբեր այցելությամբ Մայր Աթոռ։

Առավոտ է, Ս. Էջմիածնի խունկ ու խորհուրդ բուրող անմոռաց առավոտներից մեկը։ Մայր Աթոռի միաբանությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, մեկնում է Երևանի երկաթուղային կայարան՝ հանդիսավորությամբ և արժանավայել կերպով ընդունելու համար մեծանուն հյուրին։

Կայարանում արդեն իսկ հավաքվել է ժողովրդի հոծ բազմություն։

Մոտենում է ժամը և լսելի է լինում վայրաշարժի շչակի ճիչը։ Վեհափառ Հայրապետը, միաբանության անդամներով, գերաշնորհ Տ. Սիոն, Տ. Հայկազուն սրբազանների և հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանի ընկերակցությամբ դուրս է գալիս սպասման հատուկ սրահից և, շրջապատված ժողովրդի հսկա բազմությամբ, սպասում է ժամանող գնացքին։

Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոսին դիմավորելու համար կայարան էին եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Սարգիս Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Երևանի եկեղեցիների քահանայից դասը, թղթակիցներ և մամուլի ներկայացուցիչներ։

Ժամը 9.30-ին գնացքը կանգ է առնում կառամատույցի առաջ։ Երկու վարդապետներ բարձրանում են գնացք՝ ողջունելու Վրաց Կաթողիկոսի ժամանումը։ Ժողովրդի բուռն ծափահարությունների տակ գնացքից իջնում է Համայն Վրաստանի այեփառ Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը։ Երկու Հայրապետները, սաստկացող ծափողջույնների որոտի տակ և ցնծության աղաղակների մեջ ողջագուրվում են. «Ողջույն տուք միմեանց ի համբույր սրբութեան...»։ Ինչքա՜ն գեղեցիկ է ու հատկանշական քրիստոնեական սիրո այսօրինակ ողջագուրումն ու համբույրը։ Այդ համբույրը երկու քույր Եկեղեցիների և երկու հարևան ու եղբայր ժողովուրդների սրտակցության ու միասնության վառ ու սրտառուչ արտահայտությունն է։

Այնուհետև երկու Վեհափառ Հայրապետները թևանցուկ, հավատացյալ ժողովրդի խանդավառ ցույցերի միջով, առաջնորդվում են կայարանի պաշտոնական ընդունելությանց սրահը և մի փոքր հանգստանալուց հետո, ինքնաշարժներով մեկնում են դեպի Ս. Էջմիածին։

Դիմավորող ինքնաշարժների շարանը անցնում է գեղակերտ Երևանի ծառազարդ պողոտաներով, Լենինի հրապարակով, Ամիրյան փողոցով և Հաղթանակի հոյակապ կամրջի վրայով ուղղություն վերցնում դեպի Ս. Էջմիածին։

Ահա Արարատյան զմրուխտյա դաշտը, իր գեղեցիկ այգեստաններն անսպառ ոսկեհատերով։ Ահա ճանապարհների վրա հիանալի ծառուղիները և փարթամ կանաչների մեջ թաղված գյուղերի շարանը մինչև Ս. Էջմիածին, ուր դեպի երկինք են խոյացել մեր մամռոտած հինավուրց վանքերի սուրբ գմբեթները։

Ճանապարհին ինքնաշարժի մեջ երկու Վեհափառ Հայրապետները մտերմորեն զրուցում են։ Պատմական Զվարթնոցի մոտ լսելի են լինում Մայր Տաճարի զանգերի զվարթաձայն ղողանջները։

Վանքի գլխավոր դարբասի մոտ, զգեստավորված, սպասում է Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և ժողովրդի հսկա բազմությունը։ Կազմվում է եկեղեցական թափոր։

Հաղթանակի երգի նման հնչում են Մայր Տաճարի զանգերը՝ ավետելու համար, թե Մայր Աթոռ է ժամանում Քրիստոնյա Եկեղեցու պատկառելի իշխանապետներից մեկը, ծնդրադիր աղոթք առաքելու համար առ Աստված, Իշման սրբազնասուրբ խորանի առաջ։

Ամպհովանու տակ, խաչով ու խաչվառով, մոմերով ու բուրվառներով և շարականների դաշն երգակցությամբ երկու Վեհափառ Հայրապետները առաջնորդվում են դեպի Մայր Տաճար։

Տաճար մուտք գործելիս Նորին Սրբությունը ծնրադիր, սրտառուչ համբույր է դրոշմում հազարամյա քարերի վրա և խորին երկյուղածությամբ ոտք դնում ներս։

Իշման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետները կանգ են առնում և ապա Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսը ծնրադիր, բաց գլուխով, համբուրում է Ս. Սեղանը և իր ջերմագին աղոթքը մրմնջում։ Խոր ու վեհ լռություն է տիրում սրբազան այդ պահին. ամեն ինչ կարծեք աղոթող հոգի լինի...։

Ապա միևնույն հուզումները Իր սրտի մեջ, Իշման Ս. Սեղանն է համբուրում հայոց Վեհափառ Հայրապետը և դառնալով Նորին Սրբության, ասում.

«Մելքիսեդեկ Գ Սրբազնագույն Կաթողիկոս Համայն Վրաստանի և Եղբայր Մեր ի Քրիստոս.

Այս երջանիկ առիթով ուղղելով Ձեզ Մեր խոսքը, Մեր սրտի անհուն բերկրանքով կողջունեմք Ձեր բարի գալուստը Մայր Աթոռ։ Պատմական է օրը այսօրվան, վասնզի, ա-

վելի քան հազար տարվա մեր պատմության բնթացքին, քիչ անդամներ Վրաց Կաթողիկոսը առիթը ունեցած է այցելելու Ս. Էջմիածին: Թող օրհնյալ ըլլա այս օրը, և այսօրվա հիշատակը թող միշտ վառ պահվի ու պահպանվի Մեր և Մեզմե հետո եկող սերունդներու սրտերուն մեջ, և թող այսօրը քար մը ևս դնե Մեր երկու քույր եկեղեցիներու և ժողովուրդներու դարավոր պատմության հնադարյան ու ամրակուռ շենքին վրա:

Մեր սրտերուն մեջ տակավին շատ թարմ են այն բոլոր բարի հիշատակները, զորս ապրեցանք Մեր այցելության առիթով Վրաստան, հրավերովը Մեր ծերունազարդ եղբոր՝ Համայն Վրաստանի Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ-ի:

Այսօր Մենք խորապես մխիթարված և գոհ կզգանք զՄեզ, որ պեզարդ Հայրապետը այնչափ հոգնություն հանձն առած, Մեզի այցելության կուգա, բերելու համար նվիրական ողջույնները Ս. Մշխեթայի և համայն վրաց ժողովրդի՝ մեր Ս. Էջմիածնին և հայ ժողովրդին:

Կկամենայի ավելցնել նաև անձնական զգացում մը սիրո և երախտագիտության՝ հանդեպ Նորին Սրբության: Մեր այցելության բնթացքին հանչցանք զինքը և առավելագույնս սիրեցինք: Վստահությամբ կրնանք ըսել, որ Մեր անձնական համակրանքի և սիրո զգացումներն ալ չինարար դեր մը ունին, և կհավատանք, որ վերստին Մեր հանդիպումը այս բազմադարյան կամարներուն ներքև՝ առավել պիտի օգնե մեր քույր Եկեղեցիներու պայծառության և եղբայր ժողովուրդներու բարեկամության սրբազան գործին: Կհավատանք, որ առավել չափով հաջողությամբ պիտի պսակվին և՛ Մեր, և՛ Նորին Սրբության չինարար աշխատանքները:

Կրկին ողջունելով Ձեզ Սրբության ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ի սրտե կաղոթենք առ Աստված, որ Ձեր կյանքի օրերը ավելի շատնան, տեսնեք Ձեր Ս. Եկեղեցվո պայծառությունը և Ձեր ժողովրդի ա՛լ ավելի երջանիկ կյանքը, ամեն»:

Վեհափառ Հայրապետի ողջույնի և բարի դալստյան այս սրտագին խոսքերը տեղվույն վրա վրացերեն է թարգմանում պ. Ավչյանը:

Այնուհետև Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը բարձրանում է Իջման Սեղան և ասում.

«Ձեզ Սրբություն և այստեղ հավաքված սիրելի հավատացյալներ.

Նախապես ուզում եմ Ձեզ հայտնել այս առթիվ իմ ապրած խորունկ երջանկությունը, որ երկնավոր Աստուծո ողորմությամբ արժանացա տեսնելու այս փառապանծ և սրբազնասուրբ Տաճարը՝ Ս. Էջմիածինը:

Ո՜վ բարի Աստված, շնորհակալ եմ Քեզանից այս անհուն երջանկության համար:

Շնորհակալություն նաև Ձերդ Ս. Օծության, որ Ձեր սիրալիր հրավերն ինձ հնարավորություն տվեց տեսնելու այս հազարամյա Սրբությունը, որը Իմ տարիների ցանկությունն է եղել:

Ես ուրախությամբ բերում եմ Ձեզ Վրաց Ս. Եկեղեցու՝ Մշխեթայի և վրաց ժողովրդի սրտագին ողջույնները:

Երեք—չորս ամիս է անցել Իմ հրավերով Ձեր Թբիլիսի այցելության ժամանակվանից, և Դուք անմոռանալի տպավորություններ ու հիշողություններ եք թողել անձամբ Իմ, վրաց բոլոր եկեղեցականների և ժողովրդի վրա:

Այսօր այդ նույն այցելությունն է շարունակվում այստեղ նույնչափ հուզիչ և բազմաբովանդակ: Չէ՞ որ մեր փոխադարձ այցելությունները արտահայտում են մեր փոխադարձ սերն ու հարգանքը: Իմ այստեղ գալը և Ձեր այցելությունը Թբիլիսի վառ կերպով ցույց են տալիս, որ մեր կրոնական և եկեղեցական համագործակցությունը աճում է և լավագույն արդյունքներ է տալիս մեր ժողովուրդների և եկեղեցիների բարեկամությունը առավելապես ամրապնդելու տեսակետից: Իմ պատվիրակության մեջ մի հայ էլ կա, որը ներկայացնում է վրաց ժողովրդին և Ս. Եկեղեցուն: Արդյոք այս ևս փոքրիկ, բայց լիիմաստ արտահայտությունը չէ՞ մեր անկեղծ բարեկամության, որ արդեն դարերի պատմություն ունի:

Աղոթե՛նք առ Աստված, որ այս այցելությունը առավելագույն չափով ամրապնդի մեր բարեկամությունն ու սերը՝ ի պայծառություն մեր քույր Եկեղեցիների և ի բարություն մեր երկու ժողովուրդների: Թո՛ղ Աստված օրհնի մեր բոլորին:

Վերջին անգամ Ձեզ ողջունելով կասեմ, որ Դուք հպարտ պիտի լինեք, որ գլխավորում եք այս խաղաղասեր ժողովրդի Ս. Եկեղեցին:

Թո՛ղ Աստված պահի-պահպանի Ձեզ, Ձեր ժողովուրդն ու Եկեղեցին, ամեն»:

Մինչ Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսը Իր շնորհակալության խոսքն էր ասում, Մայր Տաճար է ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ, Աստրախանի և Ստալինգրադի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերգեյ եպիսկոպոսը: Նորին Սրբազնությունը խոնարհվում է Նորին Ս. Օծության առաջ և ռուսական բամբ ու հնչեղ ձայնով հաղորդում է Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի ջերմ ողջույններն ու բա-

ռեմաղթություններ Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ և ցանկանում է Նրան արևշատություն ու բեղմնավոր կյանք։

Վեհափառ Հայրապետը *Նորին Սրբազնության դիմում է ողջույնի հետևյալ խոսքով.*

«Ուրախությամբ կողջունենք Ձեզ Սրբազնության բարի ժամանումը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Մենք կրկնապես կուրախանանք՝ մեր մեջ ունենալով Սերգեյ եպիսկոպոսը, որպես ներկայացուցիչը Մեր սիրելի Եղբոր՝ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի, որ բերություններ կհաստատվին և Մենք զոհ կմնանք Աստուծմե: Թող Անոր օրհնությունը անպակաս ըլլա Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցվո և ռուս մեծ ժողովրդին վրա, թող Աստված երկար կյանք և առողջություն պարգևե Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, որպեսզի Ան երկար տարիներ շարունակե Իր իմաստուն հովվապետությունը:

Կրկին անգամ Ձեզ ողջունելով կրսենք՝ բարով եկաք Մայր Աթոռ Ս. Էջմիածին»:

Գերաշնորհ Տ. Սերգեյ եպիսկոպոսը, խորապես զգացվելով Վեհափառ Հայրապետի խոսքերից, վերստին դիմելով Նորին Ս. Օծության, հայտնում է, որ իր խոսքերը բխում են Ռուս Եկեղեցու ներկայացուցչի և ռուս մարդու ջերմ սրտից հավասարապես, թե ինքը խորապես հուզված է սրտաբաց ընդունելության համար և հիացած է հայոց Հայրենիքով և բազմադարյան Ս. Էջմիածնի Մայր Տաճարով, որ իրեն համար երջանիկ առիթ է աղոթել Ս. Էջմիածնի հնադարյան Մայր Տաճարի մեջ, որը հանդիսանում է հայ ժողովրդի Սրբություն Սրբոցը և հայ հանճարի մեծագույն արգասիքներից մեկը։ Ապա նա մաղթում է խաղաղություն աշխարհին, պայծառություն՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, և երջանիկ կյանք ու արդյունա-



ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿ

հեռագրով մրն ալ բարեհաճած է Մեզ շնորհավորել: Սակայն այդքանով չէ գոհացած և բարեհաճած է բարձրաստիճան հոգևորական մրն ալ ղրկել՝ մեր հանդիսությանց բաժնեկից ընելու համար նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցին:

Ի սրտե շնորհակալություններ կհայտնենք:

Հույս ունինք, որ Նորին Սրբազնությունը այս քանի մը օրերու ընթացքին հոգեկան ճշմարիտ մխիթարության օրեր պիտի ապրի Ս. Էջմիածնի և մեր սիրելի Հայրենիքին մեջ:

Գոհունակություն կհայտնենք Իր հաղորդած ջերմ զգացումներուն համար: Վստահ ենք, որ Նորին Սրբազնության և Մեր միջև հույնպիսի բարեկամական սիրալիր հարաբերություններ կհաստատվին և Մենք զոհ կմնանք Աստուծմե: Թող Անոր օրհնությունը անպակաս ըլլա Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցվո և ռուս մեծ ժողովրդին վրա, թող Աստված երկար կյանք և առողջություն պարգևե Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, որպեսզի Ան երկար տարիներ շարունակե Իր իմաստուն հովվապետությունը:

Կրկին անգամ Ձեզ ողջունելով կրսենք՝ բարով եկաք Մայր Աթոռ Ս. Էջմիածին»:

վետ գործունեություն՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին։

Գերաշնորհ սրբազան հոր սրտառուչ խոսքերից հետո թափորի երկար շղթան ձգվում է դեպի Վեհարան։ Մտում է խունկը, հնչում են զանգերը և երգվում են մեր հոգեզմայլ ջարականները։ Երկու Վեհափառ Հայրապետները, բազմաթիվ հավատացյալների քաղցր հայացքի տակ, ամպհովանու ներքև առաջանում են դեպի Վեհարան։ Տաճարից դուրս գալիս հնչում են ծափողջույնները։

Վեհարանի մեծ դահլիճում, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում են ընդունելության եկեղեցական արարողությունները։

Ապա Վեհափառ Հայրապետները բազմում են իրենց աթոռներին և սկսվում է բարի գալուստի հուզիչ աջահամբույրը։ Վեհափառ Հայրապետը Նորին Սրբության ներկայացնում է Սիդնեյից ժամանած հյուր հոգևորականներին՝ գերաշնորհ Սիոն, Հայկազուն սրբազաններին և հոգեշնորհ Ասողիկ ծայրագույն վարդապետին։ Ապա ներկայացվում է ամբողջ միաբանությունը։

Նորին Սրբությունը խորապես զգացվեց, երբ Նրան ներկայացան դեռ քիչ առաջ ձեռնադրված չորս նորընծա շնորհունակ սարկավագները, որոնց նա ուղղեց Իր շնորհավորանքի ջերմ խոսքերը։

Կես ժամ հետո Վեհարանում տրվեց նախաճաշ ի պատիվ հյուրերի, որն անցավ ջերմ և սրտագին մթնոլորտում։

Մի փոքր հանգստից հետո, երկու Վեհափառ Հայրապետները իրենց շքախմբերով և հյուրերով դուրս եկան շրջագայության վանքի բակում։ Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսը հանդամանորեն ծանոթացավ Մայր Տաճարի ճարտարապետական և մանրանկարչական առանձնահատկություններին, եղավ Մայր Տաճարին առընթեր եկեղեցական-հնագիտական թանգարանում և Մայր Աթոռի գանձարանում։ Ապա նրանք վանքի բակում ծանոթացան կատարված ու կատարվելիք շինարարական աշխատանքներին, որոնց համար ջերմորեն շնորհավորեցին Նորին Վեհափառությանը։

Ապա հյուրերը առաջնորդվեցին դեպի Հոգևոր Ճեմարանի բակը, որտեղ նրանց սրտատրոփ սպասում էին ուսանողները։ Վեհափառ Հայրապետների ժամանումը ուսանողների կողմից ընդունվեց ջերմությամբ և բուռն ծափահարություններով։

Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսը հուզիչ խոսքեր ուղղելով ուսանողության ասաց.

«Երիտասարդությունը ամեն ինչի աղն ու ավիշն է, առանց երիտասարդության չկա կենդանություն, հետևաբար չկա և ոչինչ։ Այս տեսակետից էլ ելնելով պետք է ասել, որ քանի Ձեր Ս. Եկեղեցին ունի ձեզ նման երիտասարդներ, նա մահ չի կարող ունենալ, նա մշտապես կմնա կենդանի՝ իր ժողովրդի մխիթարության համար։ Դուք շատ մեծ ու սուրբ գործունեության եք պատրաստվում, ձեր ուսերին ու ձեր խղճի վրա դրված է շատ մեծ պատասխանատվություն։ Դուք պետք է, որ այն սրբությամբ կատարեք։

Ես անչափ շատ եմ սիրում երիտասարդության, ուստի բարեմաղթում եմ ձեզ աստվածային օրհնություն ձեր ուսումնական գործերի հաջողության և ձեր կյանքի առողջության համար։ Օրհնյալ լինեք»։

Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը ուսանողության անունից Նորին Սրբության հայտնեց խորին շնորհակալություն Իր շնորհաբեր այցելության և սրտագին խոսքերի համար։

Ճեմարանի մուտքի աստիճանների առաջ Վեհափառ Հայրապետները նկարվեցին Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության հետ։

Ժամը 3-ին Վեհարանի սեղանատանը կազմակերպվեց ճաշկերույթ։ Սեղանի վրա առաջարկվեցին սրտագին կենացներ՝ սրբտաբուխ բարեմաղթություններով։

Նույն օրը երեկոյան ժամը 8-ին Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գերապատիվ Տ. Սիոն, Տ. Սահակ և Տ. Հայկազուն սրբազանների, հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետի և հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի, մեկնեց Երևան փոխադարձ այցելություն տալու Համայն Վրաստանի Պատրիարք Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ին։

Այցելությունն անցավ ջերմ մթնոլորտի մեջ, սրտագին զրույցներով։

***

Կիրակի է, 12-ը հոկտեմբերի։ Վաղ առավոտվանից ուխտավորների հոծ բազմությունը լցրել է վանքի բակը։ Մայր Աթոռը տոնական եռուզեռի մեջ է, ամեն կողմ տիրում է հանդիսավոր իրադրություն։

Վեհափառ Հայրապետի գահակալության երկրորդ տարեդարձի երջանիկ առիթով, հնչում են Մայր Տաճարի զանգերը։

Մայրաքաղաքից, շրջաններից, մոտ ու հեռու վայրերից հոսում է ուխտավորների շարանը Մայր Աթոռ։ Գալիս են Երևանից պաշտոնական հյուրեր և Մայր Տաճարի երկու դասերում գրավում իրենց տեղերը։

Առավոտյան ժամը 11-ին սկսվում է հանդիսավոր սուրբ պատարագը։ Վանքի բակում ալեկոծվում է ժողովրդի բազմությունը և տեղ գրավում Վեհարանից Մայր Տաճար տանող

շքերթի ճանապարհի վրա։ Շարժվում է եկեղեցական թափորը իր ողջ գեղեցկության և փառաշուք հանդիսության մեջ։

Հայրապետական ամպհովանու տակ կանգնած են երկու Վեհափառ Հայրապետները։ Թնդում է ծափահարությունների ուրախ որոտը, մինչ երկու վարդապետներ խնկարկում են և այդ խնկի անուշության մեջ հայ հավատացյալի սերն ու երախտագիտությունն է մատուցվում որպես սիրո կնդրուկ երկու Հայրապետներին։

Ժողովրդի ծովածավալ բազմությունը ավելի և ավելի է խտանում թափորի շուրջը, մինչ հուշիկ բարձրանում են Հայրապետների Ս. Աջերը՝ օրհնելու համար հավատացյալ ժողովրդին։

Եղիշե, Տ. Վահան, Տ. Մեսրոպ և Տ. Մուշեղ վարդապետները։

Հնչում են հայոց պատարագի հուզումնալից մեղեդիները։ Խնկի ծուխը, մոմերի մեղմ պլպլացումների և երգվող մեղեդիների հետ, անիմանալի խորհրդավորություն և վեհ հանդիսություն է ստեղծում Մայր Տաճարի բազմադարյան կամարների տակ։ Աղոթում են բոլորը «վասն Հայրապետին Ամենայն Հայոց» և «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը.

«Այսօր, Մայր Տաճարի պատմական կամարներուն ներքև, ցնծագին կփառաբանենք

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՀԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ՊԱՀԻՆ

Եկեղեցական թափորը հանդիսությամբ մտնում է Մայր Տաճար։

Վեհափառ Հայրապետը բազմում է Իր Հայրապետական Գահի վրա, աջակողմյան դասում, իսկ Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը ձախակողմյան դասում, հատկապես պատրաստված հայրապետական գահի վրա։

Վեհափառ Հայրապետի գահակալության առթիվ հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում գերապատիվ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, որին սպասարկում են Տ. գահակալության տոնը Ազգիս երանաշնորհ Վեհափառ Հայրապետին։

Հանդիսավոր սուրբ պատարագին երկյուղածությամբ մեր գլուխները հակած այս նվիրական սրբատաշ հատակին, ամենքս նույն հավատքով լեցված, քաղցր հուզումներով զեղուն, կրկին ու կրկին մեր աղոթքին մեջ կհայցենք ամենակալն Աստուծմե՝ պարգևելու Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն ազգընտիր Մայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին արևշատություն և բարօրություն։

Իբրև հարազատ զավակներ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, որուն ավանդություններն ու կանոնները ոչ միայն անվթար, ապա նաև ավելի զորացած մեզի հանձնեցին մեր հավատավոր հայրերն ու առաքինազարդ մայրերը, կուզանք ահա այսպես համախումբ ու ջերմեռանդ տոնելու մեր Հոգևոր Պետին գահակալության տոնը, Անոր Գահին խորհուրդը, որ վեմն ու գլխավոր ազդակը կհամարինք հայ ժողովրդի մշտատև միության։

Սքանչելագործ այս Մայր Տաճարի Ս. Սեղանին առջև ծնրադիր, ուխտ են կատարեր ազգընտիր գահակալներ՝ Ս. Գրիգոր Լուսավորչեն մինչև Մակար Ա, Խրիմյան Հայրիկեն մինչև Գևորգ Զ և Վազգեն Ա Վեհափառ Հայրապետները, իրենց անձին, իրենց հոգիին և իրենց բարձր իմացության շնորհները տարածելով ավանդապաշտ հոգևոր զավակաց վրա անխտիր։

Հուզումով ու հրճվանքով կլեցվինք այն իսկ իրողության համար, որ զինքը նախորդող լուսապայծառ հայրապետներու արժանավոր հաջորդը՝ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց շնորհազարդ Հայրապետը, որուն գահակալության երկրորդ տարեդարձը տոնելու համար այսպես համախումբ աղոթք կմատուցանե հավատացյալ հայ ժողովուրդը ամենուրեք, կշարունակե արդյունավոր ընծայել իր ստանձնած սրբազան առաքելությունը երիտասարդի ավյունով, բարձր իմացությամբ և խոհուն ու կանոնական գործելակերպով։

Երկու տարի առաջ այս Սրբավայրին մեջ ժողովի նստած մեր Եկեղեցվո իշխաններն ու ազգային պատգամավորները, Աստուծո իմաստությամբ առաջնորդված Էջմիածնի Մայր Աթոռի թափուր մնացած Գահին վրա բազմեցուցին նոր Գահակալ մը, հանձին դերաշնորհ Տ. Վազգեն սրբազան եպիսկոպոս Պալճյանի, անոր տալով Մայրագույն Պատրիարքի և Ամենայն Հայոց Հայրապետի բարձր պաշտոնը, որուն ամենեն ավելի արժանի էր ինքը, և որը դարձյալ ամենեն շատ պիտի արժեցնե ինքը։

Մենք, որ իբր առաջնորդը Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմին կմասնակցինք հայրապետական գահակալության այս հանդիսավոր արարողության և ժողովրդական տոնախմբության, կբերենք մեր հոտին սրտագին բարեմաղթանքներն ու շնորհավորությունները Նորին Սրբության։

Հայրապետական ու գահակալության մաղթանքները մեր ժողովուրդը կկատարե հավատքով ու երկյուղածությամբ, միշտ վեր ու բարձր պահելով այն զմայլելի ավանդությունը, ըստ որում Ս. Էջմիածնի Մայր Աթոռի Գահին վրա բազմած Գահակալը է և կմնա իրավամբ Գերագույն Պետը Հայաստանյայց Եկեղեցվո։

Հոգեկան այս կապի ամրացումը ավելի ևս շեշտ կստանա, երբ Նորին Ս. Օծությունը ատեն-ատեն ուղևորության կելլե Մայր Աթոռին մերձ ու հեռավոր թեմերուն, ամենուրեք գտնելով մեր ժողովրդին ջերմագին ընդունելությունը, որ կբխի Ս. Էջմիածնի և Հայրապետական Գահին հանդեպ տածված սերեն ու որդիական ակնածանքեն, ինչպես նաև պարտականության սրտագրավ կանչեն։

Ամերիկայի մեր ժողովուրդը կհուսա և անհամբեր կսպասե Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելության, և մենք սիրով կկրկնենք մեր հրավերը, ակնածանքով ակընկալելով, որ Նորին Սրբության շնորհաբեր ներկայությամբ պիտի փառավորվին մեր եկեղեցիները և հրճվանքով պիտի լեցվին սրտերը մեր հավատացյալներուն։

Հանուն ողջ հայության կաղոթենք առ Աստված, որ երկար կյանք ու արևշատություն պարգևե մեր Սրբազնագույն Վեհափառ Հայրապետին։

Թող Տերը բազմապատկե Անոր եռանդն ու ուժը Հայաստանյայց Եկեղեցվո պայծառության և հայ ժողովրդի մխիթարության ու երջանկության համար։ Ամեն»։

Պատարագիչ սրբազան հոր հուզիչ քարոզից հետո միևնույն հանդիսավորությամբ շարունակվում է սուրբ պատարագը։

Պատարագին ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ պ. Ս. Գասպարյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, մտավորականներ, ճարտարապետներ, մամուլի և ռադիոյի ներկայացուցիչներ։

Հավարտ սուրբ պատարագի, Իշման Ս. Սեղանի առաջ, հազարավոր հավատացյալների սրտաբուխ աղոթքի մրմունջների հետ միասին կատարվում է Հայրապետական հանդիսավոր մաղթանք։

Այնուհետև երկու Վեհափառ Հայրապետները հանդիսավոր թափորով առաջնորդվում են Վեհարան։ Հավատացյալ ժողովրդի բազմությունը երկյուղածորեն դիմավորում է նրանց։

Վեհարանի դարբասի մոտ Վեհափառ Հայրապետն օրհնում է իր հավատացյալ հոտը։

Թափորը շարականների երգակցությամբ բարձրանում է Վեհարանի Ծաղկյա դահլիճը, որտեղ Վեհափառ Հայրապետը բազմում է Հայրապետական Գահի վրա, ընդունելու համար Իր գահակալության երջանիկ երկրորդ տարեդարձի առթիվ պաշտոնական շնորհավորանքներ։

Նորին Ս. Օծության կողքին հատուկ բազկաթոռի վրա բազմել է Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոսը։

անդամ, Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մաճուկյանը. «Շնորհազարդ Հայրապետ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հանուն հայ հոգևորականության և համայն հայ հավատացյալ ժողովրդի Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհավորանքի ջերմ խոսք է ասում Գերագույն Հոգևոր Խորհրդի

Ձեր հայրապետական օծման և գահակալության այս երկրորդ տարելիցին առթիվ բախտավոր զգամ ինքզինքս, որ Տիրոջ ողորմությամբ ներկա կգտնվիմ դարձյալ, ինչպես ամեն տարի, և ցնծությամբ կուզամ Ձերդ

Սրբության մատուցանելու իմ սրտագին հարգանքի ու անկեղծ սիրո տուրքը, և Հարավային Ամերիկայի վիճակի մեր ժողովրդի կողմե խոնարհելու Ձերդ Ս. Օծության սիրելի և հարգամեծար անձին առջև, իբրև աստվածընտիր Հայրապետի՝ Ս. Լուսավորչի Գահուն։ Նույնպես և ավելի սրտազեղ սիրով ու որդիական հարգանքով կուգամ Ձերդ Սրբության հայտնելու Հայ Եկեղեցվո հոգևոր պաշտոնեության, այսինքն եկեղեցական դասուն սիրազեղ ու սրտաբուխ սիրո զգացումները, իր արժանընտիր Հայրապետին, աստվածարյալ հոգևոր Պետին ու Գահակալին, որ իմաստությամբ ու հայրագորով հոգածությամբ ու Ս. Հոգվույն առաջնորդությամբ կվարե Հայ Եկեղեցվո նավուն ղեկը դեպի խաղաղ նավահանգիստը։

Վեհափա՛ռ Տեր, Դուք Ձեր բարի անձին հմայքովը, Ձեր մեծ ու սիրագորով սրտին բարախումովը ու տերունական հեզության օրինակովը և քաջ ու բարի Հովվապետի իմաստությամբը առինքնած եք Ձեր զավակներուն սիրտը, հմայած եք Ձեր գործակիցներուն հոգին ու զանոնք շինարար գործի լծած եք։ Ոչ միայն Հայրենիքի ժողովուրդն ու մտավորական և արվեստագետ դասը, այլ նաև արտասահմանի հայությունը կսիրե ու կհարգե զՁեզ, Ձեր մեջ տեսնելով Լուսավորչի Աթոռին արժանավոր ու ազգընտիր Գահակալը և բարեգութ Հայրն ու Ընդհանրական Հայրապետը նախամեծար Մայր Աթոռո Սրբո Էջմիածնի։

Շնորհիվ Ձերդ Սրբության հեռատես ու իմաստուն գործունեության և հայրախնամ հոգածության, այսօր, Հայ Եկեղեցին կապրի վերածննդի նոր շրջան մը Հայրենի պայծառ երկնքի տակ, կբոլորե հոգևոր ու կրոնական զարթոնքի ժամանակաշրջան մը՝ վեհափառ Արարատի հովանին տակ ու Հայրենի բարեխնամ կառավարության բարյացակամ աչքին տակ։

Մեր սիրտը կհրճվի տեսնելով տարվե տարի Մայր Աթոռո պայծառացումը, Հոգևոր Ճեմարանի մակարդակի բարձրացումը և աշակերտության թիվի աճումը և հոգևոր ուռճացումը՝ արդեն իսկ տասնյակ մը նորընծա սարկավագներ, ինչպես նաև քահանաներ ու վարդապետներ կրոնական նոր կենսունակություն և ոգևորություն ստեղծեր — են Մայր Աթոռեն ներս, որ Ձեր հայրական խնամքին շնորհիվ կկազմակերպվի հետզհետե, Մայր Տաճարը իր գեղակառույց ճարտարապետությամբ՝ վերանորոգված է ու շքեղացած, իր շրջափակով, ընդարձակված ու գեղազարդված, որով Մայր Աթոռը կցոլացնե իր վաղեմի փառքն ու շքեղությունը։

Մեր ցանկությունն է, որ վերանորոգվին Հայաստանի պատմական ու հինավուրց վանքերն ու սրբատեղիները՝ իբրև նվիրական ուխտատեղիներ ու վառարաններ հավատքի ու լույսի, վերաբացվին բոլոր հայ եկեղեցիները Հայրենիքի ու դրացի երկիրներու մեջ։

Շնորհազա՛րդ Տեր, անցնող տարվան ընթացքին Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր գործունեությամբ, Դուք պայծառացուցիք Հայաստանյայց Ս. Եկեղեցին, որուն համար երախտագետ սիրո և սիրալիր հարգանքի արժանի եք՝ բովանդակ հայության կողմե։ Անշուշտ, մենք միամիտ չենք ըսելու համար, թե ամեն ինչ վարդագույն է, ու չենք կրնար անտես ընել արտասահմանի մեջ մեր Եկեղեցվո մեծ տագնապը, ու կաղոթենք, որ Աստուծո շնորհիվ ու Ձեր հայրախնամ իմաստությամբ կարենաք հարթել դժվարությունները ու վերահաստատել Հայաստանյայց Եկեղեցվո հոգևոր միությունը՝ ի սփյուռս աշխարհի։

Երեկ, Սրբոց Թարգմանչաց տոնն էր։ Անոնք նոր լույս մը տեսան Աստվածաշունչ մատյանին մեջ և հնարեցին հայ տառերը ու Աստուծո խոսքը տվին հայ ժողովրդին՝ իր մայրենի լեզվով։ Ինչպես շարականը կըսե՝ «Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստ անեղին, հաստատելով յերկրի զգիր կենդանի, հովուել զհօտ նոր Իսրայէլի»։ Կմաղթենք, որ Դուք, Վեհաշնո՛ւրհ Տեր, Թարգմանիչներու իմաստությամբ հովվեք Նոր Իսրայելի, այսինքն հայության բանավոր հոտը։

Մեր սրտագին մաղթանքն է, որ բարությանց Տերն ու Մեծ Հովվապետը զորավիդ հանդիսանա Ձեզի Ձեր աստվածահաճո ու սրբազան պաշտոնին մեջ, ու կաղոթենք առ Տեր ու կերգենք շարականագրին հետ, ըսելով.

«Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ՝ Հոգի Հօր և Որդւոյ... շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին, զի օրհնեսցուք զՔեզ, Տէր, այժմ և յաւիտեան»։

Կաղոթենք, որ հայրապետական գավազանը ծաղկի Ձեր օծյալ սուրբ ձեռքին մեջ։

Ապա Իր շնորհավորություններն է բերում Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը.

«Ձերդ Սրբությո՛ւն.

Շնորհավորում եմ Ձեր գահակալության երկրորդ տարեդարձն այն օրվանից, երբ Դուք բարձրացաք նամայն հայության պատրիարք-կաթողիկոսների հնադարյան փառապանծ գահը։ Ձեր Սրբությանը ցանկանում եմ բազում տասնյակ տարիներ տոնել այդ գահակալությունը և փառավորել հայ պատրիարք-կաթողիկոսների հինավուրց Գահը, որը փառավորված է Ձեր պանծալի բազմաթիվ նախորդների կողմից։

Ապա թույլ տվեք ինձ մի քանի խոսք ասել մեր փոխադարձ այցելությունների մասին:

Ձերդ Սրբություն՛ն.

Երեք ամիս անցել է այն անմոռանալի օրերից, երբ Իմ հրավերով Վրաստան և Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի Ձեր կատարած այցելությունը մեծ ուրախություն պատճառեց և՛ վրացիներին և՛ Վրաստանում ապրող հայերին՝ նրանց մեջ զարթեցնելով եղբայրական ու բարեկամական զգացմունքներ:

Այժմ այստեղ միևնույն հանգամանքն է շեշտվում Իմ փոխադարձ այցելությամբ, երբ Ձերդ Ս. Օծության հրավերով եկա Ս. Էջմիածին:

ՎԵՀԱՐԱՆԻ ԾԱՂԿՅԱ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԽՈՍՈՒՄ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Մեծ Հոկտեմբերը նոր դարաշրջան բացեց և փոխեց նաև ազգամիջյան հարաբերությունների ձևերը: Դիվանագետների միջոցով տեղի ունեցող միջազգային հարաբերությունների հին ձևը Սովետական իշխանության ոգու շնորհիվ, այդ իշխանության մեր օրերի ներկայացուցիչների շնորհիվ՝ փոխարինվել է ժողովուրդների փոխհարաբերությունների նոր ձևով. ներկայումս այդ փոխհարաբերությունները տեղի են ունենում կառավարական պատվիրակությունների միջոցով ու գիտական, գրականական, տեխնիկական և զանազան այլ հաստատությունների պատվիրակությունների միջոցով. նման ձևով հարաբերությունները տեղի են ունենում նաև դրանց ու կրոնական, եկեղեցական հաստատությունների միջև:

Մեր փոխհարաբերությունները, Ձերդ Սրբություն, միևնույն գաղափարի արտահայտությունն են, ինչպիսի գաղափար որ արտահայտում են զանազան պատվիրակությունների միջոցով կատարված փոխադարձ այցելությունները: Դրանք արտահայտում են խաղաղության գաղափարը, փոխադարձ սիրո, եղբայրության, բարեկամության, համագործակցության գաղափարը և նպատակ ունեն զարգացնել, հաստատել ու ամրապնդել այդ զգացմունքները ժողովուրդների մեջ:

Երբ բոլոր ժողովուրդները և հասարակական-ժողովրդական բոլոր կազմակերպությունները ուրախ են Սովետական իշխանության այդ գաղափարով, ուրախ են ժողովուրդների միջև խաղաղություն, փոխադարձ սեր, եղբայրություն, համագործակցություն հաստատելու ձգտումով, ապա ոչ պակաս ուրախ է նաև Քրիստոսի եկեղեցին, որը Քրիստոսի կողմից հիմնվել է մարդկության մեջ խաղաղություն, սեր և եղբայրություն հաստատելու համար:

Եթե մարդիկ շնորհակալ են Սովետական իշխանությունից միջազգային խաղաղության և եղբայրության նրա ձգտման համար, ապա

սակավ շնորհակալ չէ և Քրիստոսի Եկեղեցին, որի խնդիրն է խաղաղություն և եղբայրություն հաստատել մարդկանց մեջ. ուստի և նա ամեն կերպ մասնակցություն է ցույց տալիս բովանդակ աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում:

Մենք Ձեզ հետ միասին, Ձերդ Սրբություն, մեր փոխայցելություններով արտահայտում ենք միջազգային խաղաղության ընդհանուր ձգտումը և այդ այցելությունները երևան են բերում, դրսևորում են իսկական եղբայրություն, որ գոյություն ունի մեր ժողովուրդների՝ հայերի և վրացիների միջև:

Ուրեմն թող կեցցե՞ն Սովետական Միության ժողովուրդները, որոնք ձգտում են միջազգային խաղաղության և եղբայրության հաստատմանը:

Կեցցե՞ Սովետական իշխանությունը, որը համաշխարհային կյանքի մեջ շատ նոր և օգտակար բաներ մտցրեց, այդ թվում և ժողովուրդների փոխհարաբերությունների ներկայացուցչական ձևը, մի ձև, որ հաստատում և ամրապնդում է ժողովուրդների միջև խաղաղություն, սեր, բարեկամություն և համագործակցություն:

Կեցցե՞ն և մեր եղբայրական Եկեղեցիներն ու ժողովուրդները՝ հայ և վրացի ժողովուրդները, որոնք ըստ կարողության իրենց լուման մուծում են համայն աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում»:

Հանուն Մայր Հայրենիքի կառավարության, շնորհավորանքի ջերմ խոսք ասաց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Ս. Գասպարյանը.

«Ձերդ Վեհափառություն՛ն.

Թույլ տվեք Հայաստանի Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ Իմ կողմից ջերմորեն շնորհավորել Ձեզ Ձեր գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ:

Այսօրվա հանդիսությանը ներկա են նաև Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը Իր շքախմբով, Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Սերգեյ եպիսկոպոսը, Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամներ Հայկազուն եպիսկոպոս Արքեպիսկոպոսյանը և Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյանը, որոնց բոլորին ջերմորեն բարի գալուստ ենք մաղթում:

Անցած երկու տարիների Ձեր բեղմնավոր գործունեությունը վկայությունն է այն իրողության, որ հանձնին Ձեզ Հայ Եկեղեցին ունի իր հմուտ, արժանավոր և հայրենասեր ղեկավարը: Ձեր գահակալության երկրորդ տարեդարձի տոնակատարության այս հանդիսավոր պահին ես ուրախ եմ նշելու, որ Ձեր գործունեության այս շուրջ երկու տարիների ընթացքում Հայ Եկեղեցու և մեր Երկրի Պետական իշխանությունների միջև փոխհարաբերությունները ընթացան միանգամայն նորմալ և արդյունավետ: Այդ փոխհարաբերությունները խարսխվում են Սովետական պետության կողմից սահմանված այն օրենքի վրա, որով Եկեղեցին անջատված է Պետությունից և նա միանգամայն ազատ է տնօրինելու իր ներքին և արտաքին բոլոր եկեղեցական գործերը: Դրանով իսկ ապահովված է բոլոր քաղաքացիների խղճի ազատությունը: Դա իրավունք է տալիս մեզ վստահեցնելու Ձեզ, որ այն նորմալ փոխհարաբերությունները, որոնց մասին ես հիշատակեցի, այդպիսին կլինեն նաև հետագայում:

Երկու տարվա կարճ ժամանակաշրջանում Ձեր բազմապիսի եկեղեցական-կրոնական գործունեության հետ միաժամանակ Դուք անդուլ կերպով ծավալել եք խոշոր շինարարական աշխատանքներ, որոնց իրականացման ընթացքում Կաթողիկոսությունը ստացել է նաև մեր շինարարական և ճարտարապետական մարմինների լայն աջակցությունը:

Հայ ժողովրդի մի զգալի հատվածն այսօր դեռ ապրում է արտասահմանի տարբեր երկրներում, օտար երկնքի տակ: Սակայն նրանք, բյուր թելերով և ջերմ զգացմունքներով կապված են Մայր Հայրենիքի հետ և մեզ հետ միասին ուրախանում են իրենց վերածնված Հայրենիքի զարգացմամբ և բարգավաճմամբ: Այդ հայրենասիրական զգացմունքները արտահայտվեցին նաև Ձեր արտասահմանյան հովվապետական այցելության ընթացքում: Դուք այդ հայրենասիրությունը ջերմացրիք Ձեր ոգեշունչ քարոզներով: Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս Դուք Ձեր բարձր հեղինակությամբ Ձեր մասնակցությունը բերեցիք նաև ժողովուրդների միջև բարեկամությունն ու խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու շնորհակալ գործում:

Թույլ տվեք մի անգամ ևս բերել մեր ջերմ շնորհավորանքները և ցանկանալ Ձեզ քաջառողջություն և բեղմնավոր գործունեություն»:

Այնուհետև Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի և ամբողջ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու անունից շնորհավորանքի սրտառուչ ու գեղեցիկ հատ. ասաց գերապատիվ Սերգեյ եպիսկոպոսը.

«Ամենայն Հայոց Կաթողիկոս-Պատրիարք, ամենաերանելի Վազգեն Ա.

Նորին Սրբություն Ալեքսիսն՝ Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարքը, իմ հոգևոր պետը և Հայրը, օրհնությամբ հրամայեց և հանձնարարեց ինձ, որպես Ռուսական Ուղղափառ եկեղեցու ներկայացուցչի, այսօր, Ձեր գահակալության երկրորդ տարեդարձի այս պանծալի թվականին, ողջունել և շնորհավորել Ձերդ Սրբությանը: Եվ ես անձամբ գտնվելով Ձեր անձնավորության հմայքի ներքո, ինձ համար առանձնապես հաճելի է այսօր Ձեզ արտագինս ողջունել իմ Պատրիարքի հետ միասին, Ռուսական եկեղեցու ամբողջ եվրասիական՝ եպիսկոպոսական ժողովրդական մեծ բազմության հետ միասին իմ համեստ աղոթքները վերառաքել դարերով սրբագործված, հայ մարտիրոսների աղոթքների արցունքներով ու արյամբ ողողված Տիրամոր այս Ս. Տաճարում, Մայր եկեղեցում:

Ինձ վիճակվեց Ձեզ հետ միասին աղոթել և տեսնել այն ոգեշունչ, խաղաղարար, խանդավառ տրամադրությունը, պատարագի արարողության պահին, որ ես զգացի հոգեպես և տեսա աչքով: Ես առիթ ունեցա մի անգամ ևս համոզվելու բարեկամության և սիրո այն զգացմունքի մեջ, որ հայ ժողովուրդը և

ՆԿԱՐԻՑ Մ. ՍԱՐՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

դասի, նրա բազմանդամ հոգևորականության և ամբողջ ուղղափառ ժողովրդի հետ միասին, և Ձերդ Սրբությանը ցանկանալ, որպեսզի Դուք շարունակեք, որքան բեղմնավոր, նույնքան բազմակողմանի, որքան լայն, նույնքան իմաստուն և ճշմարիտ, առաքելական այն գործունեությունը, որը Դուք հանդես եք բերում:

Ես սրանից առաջ չեմ եղել էջմիածնում, բայց բարձր պատիվն ունեցել եմ Ձեր նախորդի կողմից այստեղ հրավիրվելու: Եվ անա այսօր, այլև երեկ՝ Տերն արժանացրեց ինձ Ձերդ Սրբության հետ միասին, սրբազան եղբայրների և հովվապետների հետ միասին, նրա հոգևորականությունը տածում են մեր նկատմամբ, ռուս մարդու նկատմամբ:

Երբ մենք դուրս եկանք հանդիսավոր բաժորի շարքից, այդ միջոցին ինձ մոտեցան հավատացյալներ և փոքրիկ երեխաներ, որոնք համբուրում էին իմ ձեռքերը և շոյում հանդերձներս: Նրանց մեջ կային ծերունիներ և կանայք, որոնք իրար հետ հայերեն խոսելիս գործ էին ածում «ռուս» բառը: Ես հասկացա, որ այդ ինձ է վերաբերում. արտաքին տեսքից ու դեմքից նրանք որոշում էին, որ ես Ռուսական եկեղեցուն եմ պատկանում: Այդ ի՞նչ է ցույց տալիս: Այդ մի ավելորդ անգամ վկայում է, ինչպես նշանածող, մեր ժողո-

վուրդների միջև այն միասնության մասին, որը գոյություն է ունեցել հնուց ի վեր, որովհետև չի եղել մի դեպք, որ Հայաստանը ըշնամանք տածած լինի Ռուսաստանի նկատմամբ, կամ հակառակը: Որովհետև այն ժամանակ, երբ Հայաստանի որոշ հարևաններ այս սարերը և ձորերը ողողում էին հայերի արյունով, ռուս ժողովուրդն իր բարեկամական, եղբայրական ձեռքն էր պարզում և նա միշտ ցանկացել է փոխադարձ պաշտպանություն և բարեկամություն: Իսկ Սովետական իշխանության ժամանակաշրջանում այդ ավելի ևս լայն ծավալ ստացավ՝ հասնելով վիթխարի չափերի: Ես այժմ երջանիկ եմ, որ ապրում եմ մեր այս օրերին, երբ բարեկամությունն ընդունել է, ճշմարիտ որ, վիթխարի չափեր՝ Սովետական իշխանության հովանու ներքո:

Ինձ համար հաճելի կլինի իմ Հոգևոր Հայր և Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիին զեկուցել այն սիրալիր, այդ քիչ է ասել, այն ջերմ, սրտագին, հայրական, ուշադիր վերաբերմունքի մասին,— ասենք ես այդքան էլ ածականներ, բառեր չեմ գտնում արտահայտելու բոլոր այն զգացմունքները, որ ես ներկա պահին ունեմ,— որ Դուք, Ձերդ Սրբություն, ցույց տվեցիք ինձ որպես իմ հարազատ մեծ եկեղեցու ներկայացուցչի: Ես Մոսկվա՝ իմ Հոր կնքորդիս, Ձերդ Սրբություն, Ձեր, Ձեզ շրջապատող հովվապետների և ժողովրդի այն ջերմ, սրտագին վերաբերմունքի մասին, որ ես այստեղ զգացի և տեսա:

Ի՞նչ ցանկանամ այսօր ես Ձեզ: Ինարկե, բազմամյա կյանք, ինարկե, Ձերդ Սրբության համար ավելի շատ բերկրանքներ, քան վշտաճարությունները կյանքում: Ինարկե բարեկամության, եղբայրության, միասնության է՛լ ավելի ամրապնդումն մեր եկեղեցիների միջև, նույնպես և մեր ժողովուրդների միջև հնուց ի վեր գոյություն ունեցող հարաբերությունները: Ես նաև կցանկանայի, որ բաղձալի խաղաղությունը անխախտ մնա, խաղաղություն, որի համար այնքան ջանքեր են գործադրվում մարդկային կյանքի բոլոր ասպարեզներում: Ես չեմ խոսում միայն քաղաքական տեսակետից. դա հզոր գործոն է, այլ խոսում եմ նաև բարոյական, հասարակական, հոգևոր, եկեղեցական տեսակետից, արվեստների տեսակետից. դրան երաշխիք է հանդիսանում Մոսկվայի անցյալ ֆեստիվալը: Ես նկատի ունեմ երիտասարդության ֆեստիվալը: Ես կամենում եմ, որ մեր Կառավարության, մեր ժողովրդի ջանքերի արդյունք այդ բաղձալի խաղաղությունն օրհնված լինի Աստուծո կողմից: Եվ որ այդ տենչալի խաղաղությունը լինի բերկրալի և հարատև: Դա իմ խորին ցանկությունն է, որովհետև Դուք էլ խաղաղության համար պայքարող խաղաղարարներից, իմաստուն հովվապետներից մեկն եք, և ես զգում եմ, որ իմ ցանկությունները հերդաշնակվում են և մոտ են Ձերդ Սրբության սրտին:

Ես ուզում եմ իմ խոսքերը եզրափակել այսպես. ցանկանում եմ Ձերդ Սրբությանը, անցյալում բազմաչարչար Հայ Առաքելական եկեղեցուն փառք և ծաղկի պես բարգավաճում Տիրոջ աստվածային այգում:

Կեցցե՞ հերոսական հայ ժողովուրդը:

Կեցցե՞ն նրա Կառավարությունը և Սովետական Միության կառավարությունը:

Կեցցե՞ ռուս ժողովուրդը՝ հայ ժողովրդի բարի եղբայրը և սրտակից ընկերը:

Կեցցե՞ Դուք, Ձերդ Ս. Օծություն:

Փա՞ռք Ձեզ՝ Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսիդ:

Թո՛ղ ողորմած Աստվածը Ձերդ Սրբությանը բազում տարիներ զորավիգ լինի նույն բարեբախտության, նույն զորության մեջ և ապագայում:

Թույլ տվեք իմ կողմից Ձեզ մատուցել Տիխվինի Աստվածամոր սուրբ պատկերը: Ես ձեռնադրվել եմ Տիխվինի վանքում՝ հյուսիսում և ընդունվել այնտեղ:

Ընդունեցեք, խնդրեմ, այս որպես նվեր և ի նշան իմ խորին հարգանաց ու նվիրվածության:

Թո՛ղ Ս. Աստվածածինը հովանավորի Ձեր հովվապետությունը, Ձեր հայրենասիրությունը և Ս. Եկեղեցու Ձեր ղեկավարությունը»:

Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից շնորհավորական ջերմ խոսք ասաց մեծանուն լեզվաբան, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամ պրոֆ. Ա. Ղարիբյանը:

Ապա հանուն Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության Վեհափառ Հայրապետին շնորհավորեց գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը.

«Ահա այսպիսի Քահանայապետ մը պետք էր մեզի, որ ըլլար սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներեն զատված և բարձրացած երկինքներեն ալ վեր։ Որ պետք չունի ուրիշ քահանայապետներուն նման իր մեղքերը քավելու համար նախ իր անձին համար պատարագ մատուցանելու, այլ սա ինքզինքը պատարագեց իր ժողովրդին համար» (Եբր. է 26—27)։

Այսօր հայ ժողովրդի Սրբություն Սրբոց հանդիսացող սա հոյակապ և պատմական Տաճարին մեջ, հավատացյալներուն այսքան բազմահազար նայվածքներուն առջև ու անոնց աղոթավոր հոգիներուն մեջ, կեցած է մեր օրերու Սրբազան Քահանայապետը Վազգեն Ա, որ Ինքզինքը կպատարագե իր Եկեղեցիի և Հայրենիքի պայծառությանը համար։ Մեր

ամենուս հոգիներուն մեջ, Ան է Աստուծո ընտրյալը, սուրբը, անարատը և անմեղը։

Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, որուն գահակալության երկրորդ տարեդարձն է այսօր, որ կատնե Կաթողիկե Մայր Եկեղեցի Ս. Էջմիածինը, Հայաստան աշխարհը և բովանդակ Սփյուռքը, կանգնած է Ան Լուսավորչի պատմական Ս. Աթոռին վրա ու Իր հայացքը ուղղած Իր հավատացյալ ժողովրդին, ու բոլոր

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ԾՆՐԱԴԻՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԴՌԱՆ ԱՌԱՋ

այն մոտավոր և հեռավոր հոգիներուն, որոնք իրմով կտոչորվին։

Նորին Ս. Օծութիւն Վազգեն Ա-ը մեր օրերու Մովսեսն է, անապատներեն Իր հոտը

առաջնորդող «առ ջուրս հանգստեան»։ Մեր օրերու Դավիթն է Ան, ախոյանը և պաշտպանը Հայ Եկեղեցիին և հավատքին։ Մեր օրերու նոր Նարեկացին է, որուն ճենճերող հոգիեն քուա-քուա բարձրացող խունկին բուրումը խաղաղություն և հոգեկան անդորրություն պիտի սփռե դալկացած հոգիներուն։ Եվ վերջապես, մեր օրերու աստվածախոս երգիչ Շնորհակալին է ան, որուն խոսքին քաղցրությունը, սրտին բարությունը և նայվածքին անուշությունը բալասանի մը պես պիտի ցնցուղվին, ընդարմացած հոգիներուն վրա, նման արշալույսի այն ցողին, որ կյանք իսկ է ծարաված բուսականության։

Հավատացյալ հայ ժողովուրդ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի. այս տեսակ քահանայապետ մը պետք էր մեզի՝ սուրբ, անարատ, անմեղ, ընտրյալ և բարձրացյալ երկինքներեն վեր։ Այսօր, ավելի քան երբեք, կծաղկի ու կպայծառանա քու հավատքիդ կեդրոնը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։ Օր ավուր կշեննան ու կպայծառանան Հայաստան աշխարհին մեջ սրբազան տաճարներդ։ Մայր Աթոռի միաբանական կյանքը, Հոգևոր Ճեմարանը գերազանցորեն նախանձելի կդառնան, Աստուծո փառքին և մեր սիրելի Հայրենիքի վերածաղկումի գաղափարին մեջ։ Դարձո՛ւր հայացքդ, ո՛վ հավատացյալ հայ ժողովուրդ, նայե՛ լեցուն հույսով ու հավատքով քու գերազանց սրբությունը հանդիսացող Ս. Էջմիածնին, ու սրտիդ խորերեն աղոթե՛ Աստուծո Անոր անսասանությանը և պայծառությանը համար։ Նայե՛ քու վերածնած Հայրենիքին ու անոր շքեղազարդ վերելքին և հառաջդիմությանը։

Կրկնե՛ միշտ ու բարձրաձայն, առանց վարանումի, առաքյալին խոսքը՝ «Զի այսպիսի իսկ վայել է մեզ Քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ի մեղաւորաց և բարձրացեալ քան զերկինս», ամեն։

Մայրագույն Արևելքի հայության անունից ջերմ, սրտագին խոսքերով ու բարեմաղթություններով Վեհափառ Հայրապետին շնորհավորեց նաև Ավստրալիայի և Մայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակ հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրագույն վարդապետ Վազարյանը։

Վերջում, հանդիսավոր լռության մեջ շնորհակալության սրտառուչ խոսք է ասում Նորին Ս. Օծություն Վազգեն Ա. Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսը.

«Ձե՛ռդ Սրբություն, Սրբազա՛ն եղբայրներ, սիրելի՛ ժողովուրդ.

Մեզ համար այս պահուս դժվար է կեդրոնանալ և պատասխան խոսք ըսել բոլոր այն խոսքերուն, այն քաղցր, հուզիչ և հոգի-փոթորկող խոսքերուն համար, զորս լսեցիք այսօր այս պատմական Մաղկյա դանիլին մեջ։

Նախ խոր հուզումով և երախտագիտության զգացումով կուզեինք շնորհակալություն հայտնել Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսին Համայն Վրաստանի, որ Իր խոր ծերության տարիքին մեջ, ալեզարդ և ալեփառ, հոգնությունը կրեց Իր Աթոռեն իջնելու և գալու մինչև Ս. Էջմիածին, Իր ողջույնի խոսքը բերելու համար այս հանդիսության առթիվ։ Կաղոթենք առ Աստված, որ Տերը Իր կյանքի օրերը շատցնե, անեցնե, երկար տարիներ ևս ապրի և Իր կենդանության տեսնե հառաջդիմությունը և ծաղկումը վրացական եղբայրական ժողովրդին և Եկեղեցիին։

Շնորհակալության խոսք պետք է ուղղենք անշուշտ նաև Նորին Սրբազնություն Սերգեյ եպիսկոպոսին Աստրախանի և Ստալինգրադի, որ կուգա մեր մեջ՝ բերելու համար ողջույնը Մոսկվայի և Համայն Ռուսիո Ամենապատիվ Պատրիարք Ալեքսի մեծ Հայրապետին։ Դուք բոլորդ Մեզ հետ միասին լսեցիք սրտաշարժ խոսքը Նորին Սրբազնության։ Մենք թեև ռուսերեն չենք հասկնար, բայց ավելի քան երբեք մինչև հիմա, Սերգեյ եպիսկոպոսի խոսքերը լրիվ հասկցանք և ապրեցանք մանավանդ։ Ան խոսեցավ Ամենապատիվ Ալեքսի Պատրիարքի սրտեն և միաժամանակ ռուս եղբայրական ժողովրդի ջերմ սրտեն, և պատմական ակնարկ մը ըրավ, ոգեկոչելով մեր հեռավոր և մոտավոր անցյալի անավոր դժբախտություններեր և պահ մը մեզ տխրեցնելով։ Ակնարկեց անշուշտ մանավանդ 1915—1918-ի մեր ժողովրդի նահատակության։ Իր այս ակնարկով, իր այս ընդգծումով, թեև պահ մը տխրեցուց զՄեզ, բայց Մեր տխրությունը վերածվեցավ մխիթարության և երջանկության զգացումի մը, վասնզի Մենք գիտենք և կապրինք այս օրերուն մեր ժողովրդի վերածնունդը, նակատագրական և վճռական օգնությամբը հավիտենապես մեզ եղբայր ռուս ժողովրդին։ Եվ կհավատանք նաև, որ հայ ժողովրդի նկատմամբ արդարության ձայնը անգամ մը ևս պիտի խոսի նույն ռուս ժողովրդի օգնությամբ և օժանդակությամբ։ Մեր երախտագիտությունը կհայտնենք մեր եկեղեցվո և մեր ժողովրդի անունով՝ Ռուս Եկեղեցվո մեծ Հովվապետ Ալեքսի Պատրիարքին և Նորին Սրբազնությունեն կխնդրենք, որ թարգմանը հանդիսանա Իր Հովվապետին առջև Մեր ամենաջերմ զգացումներուն և մտածումներուն դեպի ռուս ժողովուրդը, դեպի Ռուսական Եկեղեցին և դեպի Իր պատվական անձը, լավագույն մաղթանքներով, որ Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցին աճի, զորանա և հավետ ծաղկի փառքի մեջ։

Շնորհակալության խոսք ունինք նաև մեր Կառավարության, մեր հարազատ Հայրենիքի Կառավարության ներկայացուցիչ պ. Սարգիս Գասպարյանին, իբրև նախագահը Հայ Եկեղեցվո գործերու խորհրդի, որ իր և իր գործակիցներու ներկայությամբ և իր արտասանած խոսքերով անգամ մը ևս եկավ ապացուցելու, թե Հայ պետությունը այսօր բոլոր բարենպաստ օրինական և գործնական պայմանները ստեղծած է, որպեսզի հավատացյալ ժողովուրդը, Հայ Եկեղեցվո ծառաները՝ հոգևորականները կարենան իրենց բարի, շինարար և գոտեպնդիչ բարիքները: Անա այս բոլորի համար Մենք, հանուն համայն հայ հավատացյալ ժողովրդի, որ կապրի Հայրենիքեն ներս և ի սփյուռս աշխարհի, և հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և միաբանության, Մեր երախտագիտությունը կհայտնենք մեր Հայրենի կառավարության, վստահ ըլլալով, որ Պետական իշխանությունը, ինչպես մինչև այսօր, նաև այսուհետև, պիտի մնա իսկական արդարամիտ պետություն մը, ինչ կվերաբերի եկեղեցա-



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՆ Ս. ԳՐԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋԸ

ուժերը միատեղել և կազմակերպել իրենց հոգևոր կյանքը և հառաջդիմել այդ հոգևոր կյանքի մեջ: Կուզեինք ավելցնել, որ ներկաները այն տպավորությունը չունենան, թե տարեդարձի առթիվ է միայն, որ պ. Սարգիս Գասպարյանը, որպես Հայաստանի Կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչ, ներկա է այստեղ լոկ մի քանի շնորհավորական խոսք արտասանելու համար: Մեր ձեռքը Մեր խղճին վրա դրած, կուգանք հայտնելու, որ Հայաստանի բարեխնամ Կառավարությունը իր բարոյական աջակցությամբ և ստեղծած պայմաններով և հնարավորություններով ի նպաստ Մայր Աթոռի և Հայաստանյայց Եկեղեցվո, միշտ ներկա է այստեղ և Մենք միշտ կվայելենք այդ ներկայության բարի, շինարար և գոտեպնդիչ բարիքները: Անա այս բոլորի համար Մենք, հանուն համայն հայ հավատացյալ ժողովրդի, որ կապրի Հայրենիքեն ներս և ի սփյուռս աշխարհի, և հանուն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո և հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և միաբանության, Մեր երախտագիտությունը կհայտնենք մեր Հայրենի կառավարության, վստահ ըլլալով, որ Պետական իշխանությունը, ինչպես մինչև այսօր, նաև այսուհետև, պիտի մնա իսկական արդարամիտ պետություն մը, ինչ կվերաբերի եկեղեցական կյանքի ազատության և անկաշկանդ հառաջդիմության:

Մենք մեր Պետությենեն ավելին չենք սպասեր և չենք ակնկալեր: Դոյություն ունեցող բարենպաստ պայմաններու լավագույն ապացույցը այն է, ինչ որ բոլորդ կտեսնեք, ինչ որ կտեսնեն բոլոր այն նշմարիտ հայերը, ուխտավորները, որ եկան այս երկու տարիներու ընթացքին արտասահմանեն և տեսան վերելքը և հառաջդիմությունը Մայր Աթոռեն ներս, թե՛ հոգևոր շինարարության, թե՛ նյութական շինարարության իմաստով: Վստահ ենք, որ հայ ժողովուրդը պիտի գիտնա գնահատել այս բոլորը և իր լավագույն զգացումներով ու մտածումներով իր հայացքը պիտի ուղղե դեպի Ամենայն Հայոց Մայր

Աբոռ Ս. Էջմիածինը և դեպի ամենայն հայոց Մայր Հայրենիքը՝ Հայաստան:

Մեծ գոհունակությամբ լսեցինք նաև շատ ջերմ, անկեղծ, մաքուր զգացումները և մտածումները, որոնցմով ողջունեցին Մեր գահակալության տարեդարձը մեր բարձրաստիճան հոգևորականները՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ, Մեզ հարազատ գերաշնորհ Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան, Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ Մեր սիրելի գերաշնորհ Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան, գերաշնորհ Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան, որ այս օրերս ժամանեց Մայր Աթոռ և ստանձնեց պատասխանատու պաշտոն Մայր Աթոռեն ներս՝ իբրև վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի, ինչպես նաև հոգեշնորհ Ասողիկ ծայրագույն վարդապետ Ղազարյան, որ նույնպես այցելաբար կուգա, վերադառնալու համար իր աշխատանքի վայրը՝ դեպի Հեռավոր Արևելք, և որոնց խոսքին միացավ նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվական անդամներեն պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյան ողջույնի խոսքով՝ հանուն Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Այս բոլոր ջերմ խոսքերն ու մաղթանքները որ արտասանվեցան, Մեզ այն զգացումը կներշնչեն, որ կարծեմ այս բոլորը ուղղված չեն Մեր անձին, այլ Մեր անձն ալ այս մեծ գաղափարներու և զգացումներու ալիքին մեջ կսուզվի, կլուծվի և կանհետանա և կմնա մեկ ճշմարտապես, իրավ և ստույգ իրականություն՝ Սրբազնասուրբ Էջմիածինը և Ամենայն Հայոց Մայր Աթոռը իբրև հավիտենական գոյություն և կենդանի վեմ: Այս բոլոր մաղթանքները թույլ տվեմ, որ Մենք նկատենք ուղղված դեպի այս սրբազան հաստատությունը, որուն ժամանակավորապես կոչված ենք ծառայելու Մեր տկար ուժերով: Եվ եթե Մեր ուժերը կշատնան երբեմն և կուտանան, այդ կպարտինք ոչ թե Մեր անձին, այլ նույնպես այս հաստատության և Աստուծո, որ Իր ձեռքով իսկ հիմնած է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Իր նույն ձեռքով կառաջնորդե զՄեզ:

Թույլ տվեմ պատկեր մը ներկայացնել Զեզ Մեր առօրյա կյանքեն: Հանախ երեկոներ, երբ գրեթե բոլոր միաբանները իրենց խուցերուն մեջ կհանգստանան, Մենք առանձին կամ ընկերակցությամբ վարդապետի մը, կդրջինք այս Ս. Տաճարի սյուներուն վրա և երբեմն կանգ կառնենք՝ հեռվեն դիտելու համար անոր դեմքը: Մանավանդ երբ երեկոները պայծառ են, անոր ուրվագիծը կերևա հրստակ և ուժեղ: Եվ Մեզ այնպես կթվի, թե ամեն օր նոր բան մը կտեսնենք անոր վրա, անոր մեջ և նոր բան մը կհասկնանք, նոր ապրում մը ծնունդ կառնե Մեր կուրծքին տակ: Եվ ինքը՝ Մայր Տաճարը հանախ կմեծնա, վիրխարի համեմատություններ կստանա, դուրս կելլե իր նյութեղեն սահմաններեն և կդառնա հսկայածավալ, անարկու, ոգեշնող, խորհրդավոր և ներշնչող, կախարդորեն վեհատեսիլ և պատգամ տվող, առաջ մղող Մեր ձեռքերը, որպեսզի անոնք նվիրվին իր վերաշինության և պայծառության: Մեր հոգեկան աշխարհի մեջ էջմիածնի այս Տաճարը այնքան կմեծնա, որ կարծեմ կգերազանցե Արարատը և Մեզ այնպես կթվի, թե այստեղ առավել կհասկնանք Ս. Հովհաննես ավետարանչին խոսքը, թե «Ի սկզբանէ էր Բանն»: Աստուծո խոսքը այս Տաճարն իսկ է և մեր ժողովուրդը, ինչ որ ունի որպես հոգեկան արժեք, ինչ որ ունի իբրև պատմություն, ինչ որ ունի իբրև ստեղծագործություն, ինչ որ ունի իբրև հավատք, հույս, կամք և իդեալ դեպի պայծառ ապագան՝ սկիզբ կառնե Ս. Էջմիածնեն:

Մենք վստահ ենք, չենք տարակուսիր վայրկյան մ'իսկ, թե այս բոլորը որ Մենք կապրինք, սեփականությունն է համայն հայ ժողովրդին, թե՛ Հայրենիքեն ներս, թե՛ դրացի եղբայրական հանրապետություններու սահմաններուն մեջ և թե՛ ի սփյուռս աշխարհի ցրված հայության: Երբ կլսեմ տարբեր լուրեր արտասահմանեն՝ մի՛ հավատաք: Հայ ժողովուրդը, ինչքան ատեն կկրե այս պատվական և փառավոր անունը՝ հայ անունը, չի կրնար հավատարիմ չմնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Մենք շուրջ երկու տարի առաջ երբ եղանք արտասահման, խոսեցանք խոր լավատեսությամբ մը: Մեր այդ լավատեսությունը հետզհետե կանի ու կխորանա: Եվ ինչո՞ւ լավատես չըլլանք, երբ Մենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի աստվածակառույց կամարներուն տակ ենք և ծաղկած Մայր Հայրենիքի հողի վրա, Հայրենի կառավարության բարյացակամ ուշադրության ներքև, երբ Մենք կգործենք և կաշխատինք անկաշկանդ և ազատ, և կապրինք շինելով, վերաշինելով մեր հոգևոր կյանքը:

Ճիշտ է, կան փոքրաթիվ խմբավորումներ, որոնք տարբեր ուղղությամբ կփորձեն առաջնորդել արտասահմանի մեր հայ ժողովուրդը, կան նույնիսկ հոգևորականներ, շատ փոքրաթիվ, որոնք մոռցած հայ ժողովրդի, իրենց հարազատ ժողովրդի գերագույն շահերը, կփորձեն ցրվել մեր հոտը: Սփյուռք, ինչպես գիտեմ, կնշանակե արդեն իսկ ցրվածություն և այդ ցրվածության մեջ գալ և առավել ցրվածություն ստեղծել, առավել ուծացնելու համար հայ հավատացյալ հոտը, նույնիսկ սպառնալով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, այդ

բոլորին Մենք դժվարությամբ կհավատանք: Եվ վստահ ենք, որ հայ ժողովրդի ճշմարիտ հոգին և առողջ բնազդը, և մեր հոգևորականության, ի մասնավորի արտասահմանի հոգևորականության արի, քաջ կեցվածքը, շատ բյուրը և խաղաղությունը՝ ի փառս Աստուծո և Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցվո: Մենք միշտ քարոզեցինք, հորդորեցինք և հրավիրեցինք բոլորը հաշտության, խաղաղության և միության:



ՕՇԱԿԱՆՈՒՄ, Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄՈՏ

կարճ ժամանակի ընթացքին մեջ պիտի չեզոքացնե այն քանդիչ ուժերը, և մենք պիտի կարողանանք պահպանել մեր եկեղեցվո միությունը:

Զգելով մեկ կողմ անցյալ տարվա Մեր փորձերը և նիգերը, այս տարի փետրվարին Մեր ցանկությամբ և Մեր օրհնությամբ, Հայ-

կական Բարեգործական Ընդհանուր Միության հարգարժան նախագահը փորձ մը կատարեց այդ ուղղությամբ և դիմեց Անթիլիաս, բայց մերժվեցավ: Այս պատահեցավ փետրվար-մարտ ամիսներու շրջանին: Մեկ ամիս հետո, Մեր թելադրանքով և օրհնությամբ, Կոստանդնուպոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան երկու անգամ դիմեց Անթիլիասին և մերժվեցավ: Մեր եղբայրական ձեռքը կմերժվի: Ավելին. Մենք, առանց հուսահատելու կամ խոռվելու, վերստին գրեցինք այս հուլիսի վերջերուն Գարեգին Պատրիարքին, որ շարունակե իր նիգերը և նույնիսկ որոշ, հստակ առաջարկ մը ներկայացուցինք իրեն, որպեսզի իր գլխավորությամբ հաջողությամբ պսակվի Հայաստանյայց Եկեղեցվո միության և սիրով աստվածահաճո և ազգաշեն գործը: Կրվի, թե ծերունազարդ և հոգեպես տանջվող Մեր Պատրիարք Եղբայրը, մինչև այսօր գոնե, որևէ արդյունքի չէ հասած: Իսկ փոխարեն կլսենք, թե ոմանք, հայ հոգևորականի անունը կրող, կպատրաստվին երթալու դեպի Ատլանտյանի ափերը, այնտեղ ցրվելու համար մեր հոտը: Մենք կհավատանք, որ այդ ձեռաց գործերը չեն կրնար հաջողիլ և պիտի չհաջողին: Ս. Էջմիածինը վկա, այսօր այստեղ հավաքված բազմահազար հավատացյալ հայ ժողովուրդը վկա, որ այսպիսի ձեռնարկ երբե՛ք չի կրնար հաջողիլ: Հայ ժողովուրդը կա և կմնա, և պետք է մնա մեկ, ամբողջ, անբաժանելի և անսասանելի իր հավատքին մեջ դեպի իր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և դեպի իր վերածնած Մայր Հայրենիքը:

Սիրելի՛ ժողովուրդ, չկրցանք ընթացք չտալ Մեր զգացումներուն այս պահուս, երբ բոլորս մեկ համախմբված կաղոթենք առ Աստված, որպեսզի Տերը անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հայ ժողովուրդը, և մեր կյանքի ապագան ըլլա պայծառ և լուսավոր, և ամեն մեկս իր տեղեն իր պարտքը կատարե իր խղճին հանդեպ, Աստուծո և Ազգին առջև: Այդ պարտքը կատարելու զգացումով ապրինք, այդ պարտքը կատարած ըլլալու սուրբ զգացումով ալ օր մը հեռանանք այս անցավոր աշխարհեն, հետք մը թողլով շինարար և կենարար, ի փառս հավերժական հայ ժողովրդին:

Կեցցե՛ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, շե՛ն մնա, անհ՛, զորանա՛ և ծաղկի՛ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Ամենայն Հայոց, ապրի՛ և հառաջդիմե՛ և տարվե տարի նորանոր շինարար բարձունքներու հասնի մեր պատվական, մեր ստեղծագործ, մեր հանճարեղ հայ ժողովուրդը:

Թող Աստված պահե և պահպանե մեր Մայր Հայրենիքը այժմ, հավիտյան: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի խոսքից հետո սկսվում է շնորհավորանքի սրտառուչ աջահամբույրը: Նախապես ողջագուրվում են երկու Վեհափառ Հայրապետները, և ապա ըստ կարգին նաև բոլորն էլ մոտենում են և համբուրում Նորին Ս. Օծության օծյալ Աջը: Մայր Տաճարի երգեցիկ խումբը կատարում է «Հայրապետական մաղթերգ»-ը:

Այսօրինակ հանդիսավոր և հուզումնալից իրադրության մեջ ավարտվում են Նորին Ս. Օծության գահակալության երկրորդ երջանիկ տարեդարձի եկեղեցական և պաշտոնական արարողությունները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

Երեկոյան ժամը 5-ին, Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ:

Ճաշկերույթին ներկա են Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, Համայն Վրաստանի ծերունազարդ Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը Իր շքախմբի բոլոր անդամների հետ, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ գերապատիվ Տ. Սերգեյ Եպիսկոպոսը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Ս.-Գասպարյանը, խորհրդի անդամները, Էջմիածնի քաղաքային Սովետի և շրջանային գործադիր կոմիտեի ներկայացուցիչները, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, Հայաստանի մտավորականության ներկայացուցիչներ և այլ հյուրեր:

Սեղանը բացվեց հոտնկայս երգված «Հայր մեր»-ով։

Առաջին բաժակը առաջարկվեց Վեհափառ Հայրապետի *կողմից Համայն Վրաստանի Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ի կենաց.*

«Սիրելի՛ սեղանակիցներ.

Մեր գոհունակությունը կհայտնենք Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ի մեր մեջ գտնվելու ուրախ առիթով: Դուք ալ Մեզ հետ բարձրացուցեք ձեր բաժակները՝ խմելու համար Անոր բանկագին կենացը՝ մաղթելով քաջառողջություն և բեղուն գործունեություն:

Կեցցե՛ Վրաց Կաթողիկոսը, կեցցե՛ Վրաց Ուղղափառ Եկեղեցին, կեցցե՛ վրաց ժողովուրդը»:

Բոլորը ոտքի են կանգնում և խմում առաջարկված կենացը։

Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսը *Իր շնորհակալությունն է հայտնում հետևյալ խոսքերով.*

«Ես երազել էի լինել Ս. Էջմիածնում, համբուրել աստվածակառույց Ս. Տաճարը, կատարել Իմ ուխտը: Այսօրվա մեր միատեղումը խորհրդանիշն է մեր երկու բախտակից ժողովուրդների միության և սիրույն, համատեղ կյանքին ու պատմության կառուցման: Հուզիչ և սրտառուչ է պահը և ես շնորհակալ եմ Աստուծուց և Վեհափառ Հայրապետից, որ Ինձ պարգևեցին այսօրվա երջանկությունը»:

Դահլիճում թնդում է ուրախ ծափահարությունը։ Սեղանների շուրջ ստեղծված է ջերմ և սրտագին մթնոլորտ։

Վեհափառ Հայրապետը *երկրորդ բաժակն առաջարկում է ռուս ժողովրդի և Ռուս Ուղղափառ Եկեղեցու կենացը.*

«Նվիրական պարտք է Մեզ համար սեղանին և Աստուծո առաջ հիշել ռուս ժողովուրդն ու Ռուս Եկեղեցին: Մեր կապերը ռուս ժողովրդի և Ռուս Եկեղեցվո հետ շատ հին են և մտերմական: Անոնք մեզ հետ են եղեր մեր ուրախության և տխրության մեջ: Այնքան ալ հիշտ չէ այստեղ կապ բառը օգտագործել. կապը որոշ հեռավորություն և սահման կդնե: Մեր կապը նյութական չէ, այլ հոգեկան. հոգեկան կապերը ուրիշ մեծություն, տարածություն, խորություն և նշանակություն կունենան:

Մենք Ալեքսի Պատրիարքի հետ անձնական ծանոթություն ունինք: Ան իմաստությամբ և մեծ հեղինակությամբ կնովվի Աստուծմե Իրեն վստահված ժողովուրդը:

Մենք ոչ միայն ուրախ ենք և մխիթարված այս բարեկամությամբ, այլ, իբրև զավակը փոքր ժողովրդի մը, այս բարեկամությամբ Մենք Մեզ կզգանք մեծ և հզոր:

Հանդիսավոր այս պահուն՝ Մենք Մեր լավագույն զգացումներն ու բարեմաղթությունները կուղղենք Ամենապատիվ Ալեքսի Պատրիարքին և Անոր միջոցով՝ ռուս մեծ ժողովրդին»:

Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը «կեցցե» է հռչակում հանուն ռուս ժողովրդի, Ռուս Եկեղեցու և նրանց պետերի ու ղեկավարների։

Սարկավագների խումբը երգում է «Ուրախ լեր» շարականը։

Ապա գերապատիվ Սերգեյ եպիսկոպոսը *շնորհակալության իր խոսքի մեջ ասում է.*

«Ձերդ Սրբությո՛ւն.

Շնորհակալություն եմ հայտնում կենացի համար իմ հավատի Հոր և այն բոլորի կողմից, որոնց ներկայացուցիչն եմ ես այստեղ այս պահին: Ես հիշում եմ մի դրվագ այն օրերի մասին, երբ Գևորգ Ե Կաթողիկոսն ընդունվում էր Պետերբուրգում: Կաթողիկոսին մատուցվում է մի ծաղկեփունջ: Մատուցողը իր հառում ակնարկություն է անում եկեղեցիների միության անհրաժեշտության մասին, որին երջանկահիշատակ Հայրապետը պատասխանում է՝ ցույց տալով իր ձեռքում բռնած ծաղկեփունջը. «Այստեղ կան բազմաթիվ ծաղիկներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հարազատ գույնն ու բույրը. դրանք բոլորը միատեղ կազմում են մի չքնաղ փունջ, մի միություն: Քրիստոսի Եկեղեցին էլ մի ծաղկեփունջ է: Մենք այստեղ հավաքվել ենք աշխարհի չորս կողմերից և կազմում ենք մի միություն, պահելով հանդերձ մեր սեփական գույնն ու հոտը»: Նույնը կրկնվում է և այսօր: Թո՛ղ Աստված այդ միությունը անխախտ պահի»:

Սեղանը ղեկավարում է գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը։

Վեհափառ Հայրապետը *առաջարկում է երրորդ կենացը.*

«Բաժակ կառաջարկենք Հայկական կառավարության կենացը: Մեր մեջն են հարազատ Հայրենիքի հարազատ Կառավարության ներկայացուցիչները՝ պ. Դասպարյանը իր անձնակազմով և Էջմիածնի շրջանի իշխանության ներկայացուցիչները: Մենք, որպես Հովվապետ և Եկեղեցվո սպասավոր, ջերմ զգացումներով և երախտագիտությամբ տոգորված, կբարձրացնենք Մեր բաժակը՝ աղոթելով Սովետական պետության արևի պայծառության համար:

Պ. Դասպարյանը և իր աշխատակիցները միշտ իրենց հայրենանվեր գործի բարձրության վրա կգտնվին: Ձեզ մտեր մանրամասնությանց մեջ, որովհետև Դուք անձամբ կտեսնեք, որ այդ այդպես է: Հայրենական կառավարության հանդեպ երախտագիտու-

թյան Մեր զգացումներուն վրա պետք է ավելցնել նաև հայու Մեր զգացումները: Կսիրենք մեր Կառավարությունը և հավատարիմ կմնանք անոր ոչ միայն այն բանի համար, որ կարժանանանք անոր բարի կամեցողության, այլ մանավանդ որովհետև Մենք խորապես կգիտակցինք, որ այս իշխանությունն էր, որ փրկեց մեր երկիրը անդունդի եզերքեն, զորացուց մեր բազուկը, միտքն ու հոգին, ստեղծեց ու կազմակերպեց բազում կրթական, մշակութային հաստատություններ, վերաշինեց մեր գյուղերն ու քաղաքները, և տակավին այնքան մեծ ծրագրեր ունի ան՝ առավել զորացնելու և ծաղկեցնելու համար մեր Մայր Հայրենիքը: Մեկ խոսքով, մեր Կառավարությունը տիվ և գիշեր կմտածե մեր ժողովրդի երջանկության և խաղաղության համար: Երախտապարտ ենք մեր Հայրենի Կառավարության, և կմնանք միշտ աղոթող վերածնած Հայաստանի հաստատության և մեր հարազատ ժողովրդի խաղաղ ու անվրդով հառաջդիմության համար:

Կեցցե՛ Սովետական Հայաստանը, կեցցե՛ մեր բարեխնամ Կառավարությունը»:

Թույլ տվեք, սիրելի՛ պ. Գասպարյան, խմել Ձեր կենացը:

Բոլորը ոտքի են կանգնում։ Դահլիճում թնդում է նորից ցնծագին ծափը ի պատիվ Հայրենի կառավարության։

Ճեմարանի երաժշտության ուսուցիչ պ. Հ. Գևորգյանը դաշնամուրի վրա կատարում է Սովետական Հայաստանի Պետական Հիմնը։ Խորեն սարկավագը երգում է «Հայաստան, երկիր դրախտավայր»-ը։

Պ. Ս. Գասպարյանը *բարձրացնում է բաժակը և շնորհակալություն հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Նրա գահակալության երկրորդ տարեդարձի առթիվ։*

Գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը *խոսք առնելով ասում է.*

«Հեռավոր Ամերիկայի Միացյալ Նահանգներու Արևելյան թեմեն իբր ներկայացուցիչ Հայ Եկեղեցվո և հայ ժողովրդի, թույլ տվեք արտահայտել իմ խանդավառ հարգանքի և հիացմունքի հավատիքները՝ Վեհափառ Հայրապետի և Հայրենի կառավարության հոգածու և ջերմ ուշադրության համար, որուն կարժանանան Սփյուռքի բոլոր հայ բեկորները։ Մենք թեև տարածությամբ շատ հեռու ենք, բայց սրտով ու մտքով Ձեզի հետ ենք, կհետևինք Հայրենիքի վերելքին ու կհրճվինք, որ ունինք Վեհափառի պես արժանավոր Հայրապետ մը Լուսավորչի գահին վրա։ Մեր Սրբազան Հայրապետը Ի դարու մեր Ոսկեբերանն է սիրո և եղբայրության, Սփյուռքի ցրված հայության համար։ Վեհափառ Հայրապետի ազգօգուտ գործունեությունը զԱյն դարձուցած է բոլոր հարազատ հայերու սիրելին, անբաժան և ամենաթանկ անձը։ Ոչ մեկ ժամանակ հոտը այնքան առիթ և պատեհություն չէ ունեցած լսելու իր Հովվապետը, ինչպես հիմա։ Եվ քիչ անգամ այդ Հովվապետին ձայնը եղեր է այնքան ազդու և անկեղծ, ինչպես հիմա։

Վերջին երկու տարիներու ընթացքին, Մայր Աթոռեն ներս կատարված հսկա հառաջդիմություն կտեսնեմ։ Մարմնով հեռու ենք, բայց սրտով Ձեզ հետ ենք, պատրաստ՝ գործակցելու և օգնելու Ձեր եկեղեցաշեն գործոց հաջողության համար։

Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք բարձրացնել բաժակս Ձեր կենացը, ինչպես նաև Ձեր անմիջական գործակիցներու կենացը։ Տերը թող զորավիգ և առաջնորդ ըլլա Ձեզ Ձեր բեղուն և ազգօգուտ գործունեության ճանապարհին։

Կեցցե՛ Վեհափառը, կեցցե՛ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին»։

Հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետը *երգում է «Տէր, կեցո»-ն։*

Սարկավագները երգում են Հայրապետական մաղթերգը՝ «Ամեն հայի սրտից բխած»։

Միաբանության անունից խոսում է Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը.

«Վեհափառ տե՛ր.

Այսօր Հայ Եկեղեցու բոլոր հարազատ որդիները ցնծում են և բերկրում՝ նշելով Ձերդ Ս. Օծության գահակալության երկրորդ տարեդարձը։ Մեզ համար այսօր ազգային-եկեղեցական տոն է, որովհետև Էջմիածինը իր ազգընտիր Գահակալով մեր առաքինությանց և ազգային միասնության խորհրդանիշն ու խտացումն է։ Ձերդ Վեհափառության նվիրման և աշխատանքի շնորհիվ, մենք ապրում ենք վերազարթոն-

քի մի շրջան։ Դուք կաթիլ առ կաթիլ նվիրաբերում եք Ձեզ Եկեղեցուն և Հայրենիքին։ Հիրավի «հովիւ քաջ, որ դնէ զանձն իւր ի վերայ ոչխարաց»։ Մենք ոչինչ չենք խնայի՝ արդարացնելու համար Ձեր անգնահատելի վստահությունը, որը մեր ներշնչարանն է ու գոտեպնդող ուժը։

Թո՛ղ Տերը անշարժ ու ծաղկուն պահի Ձեր Գահը։

Երկա՜ր ապրեք և «առ ջուրս հանգստեան» սնուցանեք Ձեր բանավոր հոտը»։

Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության ու «Էջմիածին» ամսագրի անունից խոսում է Ճեմարանի դասախոս և ամսագրի խմբագիր պ. Արքուն Հատիտյանը.

«Վեհափառ Տե՛ր.

Ձեր գահակալության երկրորդ տարեդարձի երջանիկ առիթով, ինձ վրա քաղցր պարտավորություն է դրված՝ թարգմանը հանդիսանալ Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության և «Էջմիածին» ամսագրի հազարավոր ընթերցողների որդիական ու երախտագիտական զգացմունքների և հարգանքի, և շնորհավորել Ձեր գահակալության երկրորդ տարեդարձը։

Այսօր համազգային ուրախության ցնծատոն է, որովհետև Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձն է, ուրախություն՝ որ դուրս է եկել մեր ազգային շրջանակներից և իր հորձանքի մեջ է առել նաև մեր ժողովրդի և Եկեղեցու լավագույն բարեկամներին՝ հանձինս Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ-ի և Մոսկվայի և Համայն Ռուսիո Ամենապատիվ Ալեքսի Պատրիարքի ներկայացուցիչ գերանշորհ Տ. Սերգեյ սրբազանի, որոնք այս պատմական ըստ պեին մեզ հետ են՝ բաժանելով մեր ուրախությունը։ Այստեղ է նաև բովանդակ հայության ներկայացուցչությունը Հեռավոր Ամերիկաներից մինչև Մայրագույն Արևելք։

Վեհափառ Տե՛ր. Ձեր տոնը տոնն է Մայր Աթոռի, որի համար էլ այն խորապես արձագանքում է հայ սրտերում և համազգային է։

Վեհափառ Տե՛ր, թույլ տվեք մեր մաղթանքները միացնել հազարավորների աղոթավոր ձայնին և խնդրել Աստուծուց, որ Ձեր Գահը անսասան լինի Մասիս սարի նման, այծառ՝ Լուսավորչի կանթեղի պես։

Դուք, Վեհափառ Տե՛ր, երջանիկ Հայրապետ եք։ Անցյալում մեր հայրապետները եղել են «վշտալի», «շղթայակիր» հայրապետներ. Դուք պիտի ստորագրեք «Վազգեն Ա երջանիկ», որովհետև Դուք ապրում և ստեղծագործում եք մեր հայրենի ազատ պայմաններում, վերածնված հայ ժողովրդի ծոցում և Ձեր իսկ գեղեցիկ խոսքերով ասած՝ ուզում եք «քար մըն ալ ավելցնել Ս. Էջմիածնի հազարամյա քարերուն վրա, տող մըն ալ շարել մեր երկաթագիր մագաղաթներուն մեջ, պուտ մը լույս ավելցնել Լուսավորչի անմար կանթեղին վրա»։

Երջանիկ ժողովրդի, երջանիկ Հայրապետի թանկագին կենացը»։

Մայր Աթոռի պաշտոնեության անունից խոսում է Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կառավարչության պետ պ. Հմայակ Սեդգարյանը.

«Վեհափառ Տե՛ր, սրբազան հայրե՛ր, բարեկամնե՛ր.

Երիցս երջանկաբեր և հաճելի օր է այսօր Մայր Աթոռի աշխարհական աշխատողների կոլեկտիվի համար։ Մենք երջանիկ ենք, որովհետև այսօր տոնում ենք մեր սիրելի Հայրապետի գահակալության երկամյա տարեդարձը։

Վեհափառ Տե՛ր. երկու տարի է, որ մենք աշխատում ենք Ձեր ղեկավարությամբ, սակայն այդ կարճատև ժամանակաշրջանում մենք շատ բան սովորեցինք Ձեզանից։ Դուք մեզ վարակեցիք Ձեր հորդառատ խանդավառությամբ, աշխատասիրությամբ, անձը մոռանալու և ողջ էությամբ գործին նվիրվելու հարաճուն ձգտումով։ Երբ Դուք աշխատում եք,— իսկ Դուք աշխատում եք գիշերը ցերեկին խառնելով,— մենք զգում ենք, լսում ենք Ձեր զգայուն սրտի տրոփյունը, Ձեր պայծառ մտքի զարկը եկեղեցաշեն և ժողովրդանվեր աշխատանքի համար։

Մեր կոլեկտիվն ինձ հանձնարարել է, Վեհափառ Տե՛ր, բաժակ բարձրացնել Ձեր կենացը և բարեմաղթել Ձեզ երկար, շատ երկար կյանք, արևշատություն, բեղմնավոր գործունեություն, որի երաշխիքը մենք տեսնում ենք Ձեր ամեն մի քայլափոխում։

Երանի՜ թե անվախճան լիներ մեր սիրելի Հայրապետի կյանքը»։

Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր Հովհաննիսյանը խոսում է.

«Ամեն կողմից կենացներ առաջարկվեցին ամենաջերմ բարեմաղթություններով։ Դժվար է գտնել նոր և սրտաբուխ խոսքեր։ Ես խնդրում եմ Վեհափառ Հայրապետի շատ հարգելի մոր կենացը, որ Ազգին ու Եկեղեցուն տվեց հայրենասեր որդի»։

Խորեն սարկավագը երգում է «Ես լսեցի մի անուշ ձայն»։

Մամբրե արքեպիսկոպոսն անում է իր փակման խոսքը.

«Ինքնուրույն մշակույթ, գրականություն չունեցող Ազգը չապրիր։ Մենք ունինք դա-

բոլոր մշակույթ և գրականություն։ Մեր վերածնած փոքրիկ Հայրենիքը իմաստուն առաջնորդներու ղեկավարությամբ, ուստ մեծ ժողովրդի բարեկամությամբ ոգեշնչված և գոտեպնդված, մեծ և աննախընթաց վերելք մը կապրի՝ կյանքի բոլոր մարզերուն մեջ։ Երբ նկատի առնենք մեր ժողովրդի թիվը և այն համեմատության դնենք իր ստեղծած արժեքներու քանակին և որակին հետ, մենք զմեզ հսկա կգտնենք, հանճարեղ, և մեր կուրծքերը կարող են լեցվիլ արդար հպարտությամբ, կարող ենք բարձրագույն մտնել համաշխարհային արժեքներու թանգարանը, որտեղ թվապես շատ ավելի մեծ ժողովուրդներ կանշքանան մեր առջև։ Այսօր Խաչակյանով կհիանա ամբողջ մարդկությունը։ Խմենք անոր և անոր հետ մեր մշակույթի, գիտության և արվեստի բոլոր հայտնի կամ անանուն մշակներու կենացը, որոնց գործերուն առջև կխոնարհին Պետական մատենադարանը այցելող բոլոր դուխները։ Խմենք այդ բոլորին կենացը, որոնք առանց սակարկելու կնվիրեն ամեն ինչ՝ հանուն իրենց երկրին ու ժողովրդին բարօրության, հավերժական փառքին»։

Վեհափառ Հայրապետը վերջին բաժակն առաջարկում է Մամբրե սրբազանի կենացը, որը ոչ միայն Հայ Եկեղեցու արժանավոր մեկ որդին է, այլ նաև քաջ և արթուն հովիվն է մեր ամենամեծ և կարևորագույն թեմերից մեկի։ Պետք է ասել, որ նա այդ դժվարին առաքելությունը տանում է պատվով, քաջությամբ և հավատարմությամբ։

Վեհափառ Հայրապետը Իր փակման խոսքով շնորհակալություն հայտնեց ուստ և վրաց ժողովուրդներին, ողջունելով նրանց հարգարժան ներկայացուցիչներին։ Ամբողջ աշխարհի համար մաղթեց սեր և խաղաղություն, Աստուծո օգնությունն ու շնորհքը խնդրեց պետական ղեկավարների, բոլոր ժողովուրդների և եկեղեցիների համար։

Ճաշկերույթն ավարտվում է հոտնկայս երգված «Հայր մեր»-ով։

Պաշտոնական ճաշկերույթից հետո հյուրերը առաջնորդվեցին Վեհարան, որտեղ փոքր-ինչ հանգստացան և ապա մեկնեցին Երևան։

Երկուշաբթի, հոկտեմբերի 14-ին, Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ը Իր շքախմբով, գերապատիվ Տ. Սերգեյ եպիսկոպոսը, գերապատիվ Տ. Սիոն, Տ. Մամբրե և Տ. Սահակ արքեպիսկոպոսների ընկերակցությամբ այցելեցին մեր մայրաքաղաքի տեսարժան վայրերը, եղան Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում (Զեռագրատունը) և Պետական թանգարանում, ապա ուխտի գնացին Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմին։ Օշականում թանկագին հյուրերը շերմորեն դիմավորվեցին։ Խմբովին այցելեցին Ս. Մեսրոպի շիրիմը։ Վրաց Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ-ը հոգեհանգիստ կատարեց Ս. Մեսրոպի գերեզմանի վրա։

Այնուհետև հյուրերը եղան Զվարթնոցում, այցելեցին Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի վանքերը և վերադարձան Մայր Աթոռ։

Փոքր հանգստից հետո ի պատիվ հյուրերի Վեհարանում տրվեց հրաժեշտի ճաշկերույթ, որն անցավ ջերմ ու սրտագին մթնոլորտում։

Ճաշկերույթից հետո Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Կաթողիկոսը և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ Սերգեյ եպիսկոպոսը համախորհուրդ պատրաստեցին և ստորագրեցին խաղաղության կոչը։

Երեկոյան ժամը 7-ին հյուրերը մեկնեցին Երևան։

Նույն օրը, գիշերվա ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, միաբանության մի խումբ անդամների ընկերակցությամբ մեկնեց Երևան՝ ճանապարհելու համար Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ին։ Նորին Սրբությանն ուղևորելու համար Երևանի երկաթուղային կայարանն էին եկել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ պ. Սարգիս Գասպարյանը, Տ. Մամբրե, Տ. Հայկազուն սրբազանները, Մայր Աթոռի աշխարհական պաշտոնեությունը, Հոգևոր Ճեմարանի ուսուցչական կազմը, մայրաքաղաքի քահանայից դասը, եկեղեցական խորհուրդների անդամները, թղթակիցներ և մամուլի ներկայացուցիչներ։

Մեկնման ժամին Նորին Սրբությունը, թևանցուկ արած Վեհափառ Հայրապետին, ուղղվեց դեպի գնացք։ Երկու Վեհափառ Հայրապետները սրտագին ողջագուրվեցին։ Միաբանության անդամներն ու բոլոր ներկաները համբուրեցին Նորին Սրբության Աջը և բարի ճանապարհ մաղթեցին։

Վեհափառ Հայրապետը Նորին Սրբության մաղթեց երջանիկ վերադարձ Թբիլիսի, Իր Աթոռանիստ վայրը։ Բուռն ծափահարությունների տարափի տակ շարժվեց գնացքը։ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ-ը հրաժեշտ առավ լավագույն տպավորություններով և քաղցր հուշերով Վեհափառ Հայրապետից, Մայր Աթոռից, մեր Հայրենիքից և ժողովրդից։

Բարի ճանապարհ մեր թանկագին հյուրերին։

***

Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսիի և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Սերգեյ սրբազանը Մայր Աթոռում մնաց ևս երկու օր։ Այդ ժամանակի ընթացքում Նորին Սրբազնութիւնը քանիցս եղավ Վեհափառ Հայրապետի մոտ, այցելեց Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը։

Հոկտեմբերի 16-ին, հինգշաբթի օր, դիշերվա ժամը 11.40-ին գերաշնորհ Տ. Սերգեյ սրբազանը մեկնեց։

Հանուն Վեհափառ Հայրապետի, Նորին Սրբազնութեանը ճանապարհեցին գերապատիվ Տ. Սահակ սրբազանը, Տ. Հայրիկ և Տ. Մուշեղ վարդապետները։

Բարի ճանապա՜րհ մեր բարի ռուս եղբորը։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ